Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
շուկայի վերահսկողության տեսչական մարմնի
կառավարման խորհրդի
2021 թվականի դեկտեմբերի 13-ի N 16
որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2022 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
Ծ Ր Ա Գ Ի Ր

Բ ո վ ա ն դ ա կ ո ւ թ յ ո ւ ն

1. Ներածություն _____ 3

2. Ծրագրի նպատակները _____ 4

3. Ծրագրի մշակման նպատակով տեղեկատվության հավաքագրման աղբյուրները _____ 9

4. Իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը _____ 10

5. Ծրագրով նախատեսված միջոցառումները, ակնկալվող արդյունքները և իրականացման ժամանակացույցը _____ 12

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմինը (այսուհետ՝ ՇՎՏՄ) գործում է ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 732-Լ որոշման 1-ին կետով հաստատված ՇՎՏՄ-ի կանոնադրությամբ և համաձայն «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն ենթակա մարմին:

ՇՎՏՄ-ն իրականացնում է ոչ պարենային արտադրանքի անվտանգության, չափումների միասնականության ապահովման, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի, համապատասխանության գնահատման, նյութական պահուստի, արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտներում պետական վերահսկողություն՝ աշխատանքային ռեսուրսները նպատակաուղղելով դեպի առավել ռիսկային ոլորտները, տնտեսվարող սուբյեկտները և ապահովելով հայտնաբերված խախտումների կանխարգելումը, անվտանգ ոչ պարենային արտադրանքների առկայությունը, ինչպես նաև ստուգաչափված չափման միջոցների շահագործումը շուկայում:

ՇՎՏՄ-ի 2022 թվականի տարեկան գործունեության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մշակման համար հիմք են հանդիսացել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N732-Լ որոշմամբ հաստատված ՇՎՏՄ-ի կանոնադրության դրույթները և այլ նորմատիվ իրավական ակտեր:

2. Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է՝ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող ոչ պարենային արտադրանքների համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին, ստուգաչափման ենթակա չափման միջոցների համապատասխանությունը չափագիտական կանոններին և նորմերին, նյութական պահուստի օրենսդրության պահանջների պահպանումը, արտադրական կանեփի նկատմամբ վերահսկողության իրականացման համար լիզենզավորված անձանց գործունեության համապատասխանությունը լիցենզավորման պայմաններին և պահանջներին, խախտումների բացահայտումը, կանխարգելումն ու վերացումը: Մասնավորապես, ՇՎՏՄ-ի կողմից իրականացված վերլուծությունների արդյունքում (տրված է 4-րդ գլխում) Ծրագիրը կազմելիս թիրախավորվել են հետևյալ ոլորտները.

1. *Տեխնիկական կանոնակարգման ենթակա ոլորտներ*, մասնավորապես՝
   ա) հեղուկացված ածխաջրածնային գազեր,
   բ) ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք,
   գ) ավտոգազալիցքավորման ճնշակայաններ,
   դ) երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք,
   ե) օծանելիքակոսմետիկական արտադրանք,
   զ) խաղալիքներ:
2. *Չափագիտական կանոնների և նորմերի տարածման ոլորտներ, որտեղ շահագործվում են ստուգաչափման ենթակա չափման միջոցներ, մասնավորապես՝*
   ա) բանկային և գրավատնային գործունեություն,
   բ) ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների տեխզննում,
   գ) փոստային կապի բնագավառ,
   դ) հանրային սննդի բնագավառ,

ե) բժշկական կենտրոններ և պոլիկլինիկաներ,

զ) ավտոգազալիցքավորման ճնշակայաններ,

է) հեղուկացված ածխաջրածնային գազերի լիցքավորում,

ը) ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիքի լիցքավորում:

Տեխնիկական կանոնակարգման ենթակա Ծրագրով թիրախավորված ոլորտներում ՇՎՏՄ-ի վերահսկողական գործառույթները միտված են լինելու տեխնիկական կանոնակարգման ենթակա շուկայահանված ոչ պարենային արտադրանքի համապատասխանության ապահովմանը տեխնիկական կանոնակարգերով սահմանված պայմաններին և պահանջներին, մասնավորապես՝ անվտանգության ցուցանիշների պահպանմանը, համապատասխանության գնահատման ենթարկված ոչ պարենային արտադրանքի շուկայահանմանը, ինչպես նաև մակնշմանը ներկայացված պահանջների ապահովմանը:

ՇՎՏՄ-ն, նպատակ ունենալով բարելավել անվտանգ ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի առկայությունը շուկայում, ձեռք է բերել մարդու կյանքին և առողջությանն առավել վնաս պատճառող ցուցանիշի՝ K-5 դասի վառելիքի ծծմբի տեսակարար կշիռը որոշող լաբորատոր սարքավորում: Այս սարքի միջոցով ՇՎՏՄ-ն հնարավորություն կստանա նվազեցնել ստուգման տևողությունը, արագ արձագանքել դիմում-բողոքներին, ինչպես նաև խնայել լաբորատոր փորձաքննության համար հատկացված ֆինանսական միջոցները:

ՇՎՏՄ-ն 2021 թվականին ձեռք է բերել նաև ոսկու անալիզատոր: Լաբորատոր փորձաքննության իրականացման նպատակով անհրաժեշտ է ՇՎՏՄ-ին պատկանող նավթամթերքի և թանկարժեք մետաղների լաբորատորիաների հավատարմագրում, ինչի ուղղությամբ արդեն իսկ տարվում են աշխատանքներ:

ՇՎՏՄ-ն նախատեսում է ձեռք բերել և հավատարմագրել նաև հեղուկ ածխաջրածնային գազերի, խաղալիքների և արտադրական կանեփի

նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով համապատասխան լաբորատոր փորձարկման սարքեր:

Վերը նշվածով պայմանավորված ՇՎՏՄ-ի կազմում ստեղծվել են ևս երկու նոր կառուցվածքային ստորաբաժանումներ՝

ա) արտադրական կանեփի վերահսկողության իրականացման վարչություն,

բ) նմուշառման, լաբորատոր փորձաքննությունների և չափումների իրականացման վարչություն:

Ելնելով վերը նշվածից ՇՎՏՄ-ն տեխնիկական կանոնակարգման ենթակա ստորև ներկայացված ոլորտներում 2022 թվականին նախատեսվող ստուգումների (442 տնտեսվարող սուբյեկտ) իրականացման պատկերը հետևյալն է՝

ա) հեղուկացված ածխաջրածնային գազեր՝ 74 տնտեսվարող սուբյեկտ,

բ) ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք՝ 96 տնտեսվարող սուբյեկտ,

գ) ավտոգազալիցքավորման ճնշակայաններ՝ 74 տնտեսվարող սուբյեկտ,

դ) երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք՝ 61 տնտեսվարող սուբյեկտ,

ե) օծանելիքակոսմետիկական արտադրանք՝ 61 տնտեսվարող սուբյեկտ,

զ) խաղալիքներ՝ 76 տնտեսվարող սուբյեկտ:

ՇՎՏՄ-ն 2022 թվականի ստուգումների ծրագիրը կազմելիս նաև թիրախավորել է այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք ՇՎՏՄ-ի վերահսկման ենթակա միաժամանակ մի քանի ոլորտի արտադրանք են իրացնում:

Չափումների միասնականության ապահովման Ծրագրով թիրախավորված ոլորտներում ՇՎՏՄ-ի վերահսկողական գործառույթները միտված են լինելու ստուգաչափման ենթակա շահագործվող և շուկայահանված

չափման միջոցների համապատասխանության ապահովմանը չափագիտական կանոններին և նորմերին:

ՇՎՏՄ-ի նախաձեռնության արդյունքում սույն թվականի մայիսի 26-ին ընդունվեց «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության ՀՕ-230-Ն օրենքը, ըստ որի ՇՎՏՄ-ին վերապահել է՝

ա) առանց «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի ներկայացուցչի ստուգումների ժամանակ չափումների իրականացման իրավասություն,

բ) ըստ անհրաժեշտության ստուգման արդյունքներով արձանագրված իրավախախտման հիման վրա տրված կարգադրագրի հետ մեկտեղ կապարակնքում (դրոշմում),

գ) կարգադրագրի պահանջները սահմանված ժամկետում չպահպանելու և (կամ) առանց ՇՎՏՄ-ի հետ գրավոր համաձայնեցման չափագիտական վերահսկողություն իրականացնող ծառայողի կողմից դրված կապարակնիքը (դրոշմը) վնասելու կամ հանելու համար օրենքով սահմանված կարգով պատասխանատվության միջոցի կիրառում,

դ) վերահսկողություն իրականացնել ծառայությունների մատուցման ոլորտում:

ՇՎՏՄ-ի նախաձեռնության արդյունքում սույն թվականի մայիսի 26-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ ՀՕ-232-Ն օրենքը, ինչի արդյունքում ՇՎՏՄ-ին վերապահվել է.

ա) առանց ստուգման հրամանի նախապես ծանուցման չափագիտական վերահսկողություն իրականացնելու իրավասություն,

բ) ստուգում իրականացնող անձի կամ ստուգում իրականացնող պետական մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտին օրենքով նախատեսված իրավասությունների շրջանակներում տրված նախկին ստուգմամբ հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ

հանձնարարականի (կարգադրագրի) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ իրականացնելու իրավասություն:

Չափագիտական կանոնների և նորմերի նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու նպատակով ՇՎՏՄ-ն ձեռք է բերել ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի չափանոթներ, բարձր ճնշման բնական գազի բալոններ և համապատասխան կշեռքներ, հեղուկացված ածխաջրածնային գազերի փորձանմուշ վերցնելու, ինչպես նաև քաշը որոշող համապատասխան սարքեր:

Ելնելով վերը նշվածից ՇՎՏՄ-ն ստուգաչափման ենթակա չափման միջոցների շահագործող ստորև ներկայացված ոլորտներում 2022 թվականին նախատեսվող ստուգումների (338 տնտեսվարող սուբյեկտ) իրականացման պատկերը հետևյալն է՝

ա) բանկային և գրավատնային գործունեություն՝ 19 տնտեսվարող սուբյեկտ,

բ) ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների տեխզննում՝ 15 տնտեսվարող սուբյեկտ,

գ) փոստային կապի բնագավառ՝ 18 տնտեսվարող սուբյեկտ,

դ) հանրային սննդի բնագավառ՝ 15 տնտեսվարող սուբյեկտ,

ե) բժշկական կենտրոններ և պոլիկլինիկաներ՝ 27 տնտեսվարող սուբյեկտ,

զ) ավտոգազալիցքավորման ճնշակայաններ՝ 74 տնտեսվարող սուբյեկտ,

է) հեղուկացված ածխաջրածնային գազերի լիցքավորում՝ 74 տնտեսվարող սուբյեկտ,

ը) ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիքի լիցքավորում՝ 96 տնտեսվարող սուբյեկտ:

3. Ծրագրի մշակման նպատակով տեղեկատվության հավաքագրման աղբյուրները

Առավել ռիսկային ոլորտները և տնտեսվարող սուբյեկտները բացահայտելու, ինչպես նաև Ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՇՎՏՄ-ն տեղեկատվություն է հավաքագրել պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից, քաղաքացիներից և այլ աղբյուրներից: Մասնավորապես՝

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի, շրջակա միջավայրի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, առողջապահության և արտակարգ իրավիճակների նախարարություններից,
2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն ենթակա պետական եկամուտների կոմիտեից,
3. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնից,
4. <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ից,
5. Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հավաքագրված տվյալներ,
6. Հայաստանի Հանրապետությունում գործող բենզալցակայաններում, հեղուկ ածխաջրածնային գազի լիցքավորման կայաններում և ԱԳԼՃԿ-ներում իրականացված իրազեկման աշխատանքների արդյունքում ձեռք բերված տեղեկատվություն,
7. Ստացված դիմում-բողոքների և հեռախոսազանգի միջոցով,
8. ՋԼՄ-ներից և համացանցից՝ իրականացված ուսումնասիրությունների միջոցով:

4. Իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսվել էր 450 տնտեսվարող սուբյեկտի մոտ իրականացնել ստուգում, որից

1-ին եռամսյակում՝ 100,

2-րդ եռամսյակում՝ 140,

3-րդ եռամսյակում՝ 120

4-րդ եռամսյակում՝ 90:

2021 թվականի տասը ամիսների ընթացքում իրականացվել է ծրագրով նախատեսված 423 ստուգում, դիմում-բողոքի հիման վրա՝ 49 ստուգում, այլ պետական մարմինների գրությունների հիման վրա՝ 38-ը: Ծրագրով նախատեսված 11 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգում չի իրականացվել դրանց գործունեությունը դադարեցված, ժամանակավորապես դադարեցված, ստուգումը խոչընդոտելու և այլ պատճառներով:

Առավել ռիսկային տնտեսավարող սուբյեկտներին բացահայտելու նպատակով ՇՎՏՄ-ն ՀՀ կառավարությանն ենթակա պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված ՀՀ տարածք ներմուծված (այդ թվում նաև ԵԱՏՄ-ից) ոչ պարենային արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությունը մանրամասն ուսումնասիրել և վերլուծել է, ինչի արդյունքում պարբերաբար և մեծ ծավալի ներմուծում իրականացնող տնտեսվարող սուբյեկտները ներառվել են ՇՎՏՄ-ի տեղեկատվական բազա: ՀՀ կառավարությանն ենթակա պետական եկամուտների կոմիտեի հետ բանակցությունների արդյունքում նախատեսվում է նաև ՇՎՏՄ-ին ընձեռել հնարավորություն իրական ռեժիմով տեղեկատվություն ստանալ ՇՎՏՄ-ի կողմից վերահսկման ենթակա ՀՀ տարածք ներմուծված ոչ պարենային արտադրանքների վերաբերյալ:

Ստուգման արդյունքներով 2021 թվականի ընթացքում նշանակված տուգանքների գումարը կազմել է 73985.0 հազար ՀՀ դրամ՝ կազմելով նախորդ տարի նշանակված տուգանքների կրկնակին (37.035.0 հազար):

Առկա ռիսկերի բացահայտման նպատակով ՇՎՏՄ-ն վերլուծել է նաև բացահայտված խախտումների բնույթը և ոլորտները: ՇՎՏՄ-ի կողմից 2021 թվականի ընթացքում իրականացված ստուգումների արդյունքում 73,2% տնտեսվարող սուբյեկտների (310 տնտեսվարող) մոտ հայտնաբերվել են տարբեր բնույթի (համապատասխանության գնահատման փաստաթղթերի բացակայություն, մակնշման, չափագիտական նորմերի և այլ) խախտումներ: Ստուգումների ընթացքում, ՇՎՏՄ-ի կողմից բացահայտված խախտումների և թերությունների վերացման համար տնտեսվարող սուբյեկետները 2021 թվականի ընթացքում դիմել և համապատասխան մարմիններից ստացել են՝

- թվով 55 համապատասխանության գնահատման փաստաթուղթ՝ սերտիֆիկատներ և հայտարարագրեր,
- թվով 587 չափման միջոց ենթարկվել է ստուգաչափման:

ՇՎՏՄ-ի կողմից 2021թ. իրականացրած ստուգումների ընթացքում նույն ոլորտում 18 և ավել կիրառված ստուգաթերթերի արդյունքում հայտնաբերված խախտումների տեսակարար կշռի պատկերը ընդհանուր թվաքանակի նկատմամբ ըստ ոլորտների հետևյալն է՝

- չափումների միասնականության ապահովում (տեսակարար կշիռը 69%),
- տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն (տեսակարար կշիռը 44%),
- ցածրավոլտ սարքավորումներ (տեսակարար կշիռը 47%),
- խաղալիք (տեսակարար կշիռը 31%),
- օծանելիքակոսմետիկական արտադրանք (տեսակարար կշիռը 16%),
- թեթև արդյունաբերություն (տեսակարար կշիռը 74%),
- երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք (տեսակարար կշիռը 28%),

- ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք (տեսակարար կշիռը 80%),
- ԱԳԼՃԿ (տեսակարար կշիռը 83%),
- կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ (տեսակարար կշիռը 11%):

ՇՎՏՄ-ն իր 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը կազմելիս հաշվի է առել նաև վերը նշված պատկերը:

ՇՎՏՄ-ի կողմից կարգավորվող ոլորտներում առավել ռիսկային տնտեսվարող սուբյեկտներին բացահայտելու նպատակով իրականացվում է հավաքագրված ոչ պարենային արտադրանքների վերաբերյալ տվյալների վերլուծություն: Մասնավորապես իրականացվել է. ՀՀ կառավարությանն ենթակա պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված ՀՀ տարածք ներմուծված ոչ պարենային արտադրանքների վերաբերյալ տեղեկատվության վերլուծություն՝ վերհանելով պարբերաբար և մեծ ծավալի ներմուծումներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտները

5. Ծրագրով նախատեսված միջոցառումները, ակնկալվող արդյունքները և իրականացման ժամանակացույցը

2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված է վերահսկման ենթակա 22 ոլորտի 592 տնտեսվարող սուբյեկտ (2021թ.-ի նկատմամբ 33% աճ): 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների քանակական աճը հիմնականում պայմանավորված է ՇՎՏՄ-ի աշխատողների թվաքանակի 44% աճով՝ 45 միավորից դառնալով՝ 65: ՇՎՏՄ-ն գտնում է, որ ստուգումների քանակի 33% աճը չի կարող բացասական հետևանքներ թողնել 2022 թվականին իրականացվելիք ստուգումների արդյունքների (որակի) վրա:

ՇՎՏՄ-ն բացի ստուգումների իրականացման գործառույթից 2022 թվականին նախատեսում է նաև պարբերաբար իրականացնել իրեն

վերապահված վերահսկողական ոլորտներում ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա խախտումներ կատարած տնտեսվարող սուբյեկտները կիրազեկվեն այդ մասին և սահմանված ժամկետներում խախտումները չշտկած տնտեսվարող սուբյեկտների մոտ կիրականացվեն ստուգումներ:

ՇՎՏՄ-ի կողմից 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների թվաքանակն՝ ըստ եռամսյակների հետևյալն է.

1-ին եռամսյակում՝ 130,

2-րդ եռամսյակում՝ 190,

3-րդ եռամսյակում՝ 152,

4-րդ եռամսյակում՝ 120:

Ծրագրով նախատեսվում է 2022 թվականին իրականացնել հետևյալ հիմնական միջոցառումները.

- Համապատասխանության գնահատման ոլորտում իրազեկման մակարդակի բարձրացման և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառմամբ ապահովել համապատասխանության գնահատման ընթացակարգ անցած ոչ պարենային արտադրանք իրացնողների աճ: Այս ցուցանիշի բարելավմանը նպաստելու է նաև ՇՎՏՄ-ի կողմից ձեռք բերած լաբորատոր սարքավորումները:
- Չափագիտության ոլորտում չափագիտական պետական լիազոր մարմնի հետ համագործակցության մակարդակի բարձրացման և վերահսկողական գործառույթի գործիքակազմի իրականացմամբ ապահովել ստուգաչափված չափման միջոցների շահագործման աճ: Այս ցուցանիշի բարելավմանը նպաստելու է նաև ՇՎՏՄ-ի կողմից ձեռք բերած չափման միջոցները:
- Մակնշման ոլորտում իրազեկման մակարդակի բարձրացման և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառմամբ ապահովել

առանց մակնշման կամ թերի մակնշմամբ ոչ պարենային արտադրանքի շուկայահանման նվազում:

- Նավթամթերքի ոլորտում՝ ապահովել տեխնիկական կանոնակարգերով սահմանված անվտանգության ցուցանիշներին համապատասխանող շուկայահանված ավտոմոբիլային բենզինի, դիզելային վառելիքի, բարձր ճնշման և հեղուկացված ածխաջրածնային գազերի աճ, ինչպես նաև այս ոլորտում թերլիցքավորման դեպքերի զգալի նվազում:
- Թանկարժեք մետաղների ոլորտում հարգորոշող և հարգադրոշմող հաշվառված անձանց կողմից ծավալած գործունեության նկատմամբ վերահսկողական լծակների արդյունավետության բարձրացում՝ կիրառելով ձեռք բերված թանկարժեք մետաղների անալիզատորը:
- Ռիսկերի գնահատում՝ ՇՎՏՄ-ի վերահսկողական ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և ռիսկերի կառավարում:
- ՇՎՏՄ-ի գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտում առկա խնդիրների բացահայտում և համապատասխան միջոցառումների ներկայացում, մասնավորապես՝ նախատեսվում է «Շուկայի վերահսկողության մասին» ՀՀ օրենքի ընդունում, ինչի արդյունքում ՇՎՏՄ-ին կվերապահվեն նաև հետևյալ իրավասությունները՝
  - տեխնիկական կանոնակարգին չհամապատասխանող արտադրանքի իրացման կասեցում, հետ կանչում և ոչնչացում,
  - հսկիչ գնման իրականացում,
  - դիտարկումների իրականացում:
- կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ (ծրագիրը ներկայացված է 2-րդ հավելվածով),
- անձնակազմի կարողությունների զարգացում՝ համագործակցելով ԵԱՏՄ, ԵՄ և այլ միջազգային կառույցների, ինչպես նաև այլ մասնագիտացված շահագրգիռ մարմինների հետ՝ առնվազն մեկ դասընթացի կազմակերպում,

- դիմում-բողոքներին արձագանքում, խորհրդատվության տրամադրում:

ՇՎՏՄ-ի կողմից նախատեսված 2022 թվականին իրականացվելիք միջոցառումները՝ ըստ կատարման ժամանակացույցի ներկայացված են հավելված 1-ով:

Որակի պետական վերահսկողության մեխանիզմների արդիականացման ծրագրի շրջանակներում (գնահատված է 2 մլն եվրո) ՇՎՏՄ-ն նպատակադրվել է լուծել իրեն վերապահված վերահսկողական գործառույթներն իրականացնելիս ի հայտ եկած խնդիրները և բարելավել արդյունավերտությունը: Մասնավորապես նախատեսվում է.

- լաբորատոր սաքավորումների և չափման միջոցների ձեռք բերում,
- սահմանային անցակետերում վերահսկողական ստորաբաժանումների ստեղծում,
- ծրագրային ապահովման միջոցով վերահսկողական մեխանիզմների ներդրում,
- գույքի արդիականցում,
- աշխատողներների աշխատանքային ունակությունների ու հմտությունների կատարելագործում:

ՇՎՏՄ-ի խնդիրներն են ՇՎՏՄ-ին վերապահված նոր գործառույթների իրականացման համար համապատասխան ստրաբաժանումների աշխատանքային պայմանների ստեղծումը և ապահովումը, մասնավորապես ՇՎՏՄ-ին հատկացված անշարժ գույքի մասնակի հիմնանորոգումը, առկա շարժական գույքի ոչ բավարար քանակը, ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելքի նկատմամբ սահմանված անվտանգության ցուցանիշների համապատասխանության վերահսկման նպատակով սահմանային անցակետերում վերահսկողական գործառույթների բացակայությունը:

ՇՎՏՄ-ն լաբորատոր փորձաքննությունները և չափումներն իրականացնում է այլ կառույցների միջոցով, ինչով պայմանավորված այդ աշխատանքների իրականացումն ավելի ժամանակատար և ծախսատար է,

իսկ ներմուծվող արտադրանքների դեպքում չի կանխվում չհամապատասխանող ոչ պարենային արտադրանքների ներթափանցումը ՀՀ տարածք: Հարկ է նշել, որ <<Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին>> ՀՀ օրենքով սահմանված է արտադրական կանեփի լաբորատոր փորձաքննության իրականացում, որը պետք է իրականացվի ՇՎՏՄ-ին պատկանող լաբորատորիայում, ինչն առկա չէ: Նավթամթերքի բաշխիչ աշտարակների աշխատանքների նկատմամբ չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության արդյունքում արձանագրվում են ստուգաչափված բաշխիչ աշտարակների անհամապատասխանություններ, որոնց կանխման համար ՇՎՏՄ-ն չունի ներդրված համապատասխան սարքեր և ծրագրային մեխանիզմներ:

ՇՎՏՄ-ին հատկացված է Կոմիտաս 49/2 հասցեում գտնվող շենքից 2-րդ և 3-րդ հարկերը, մինչդեռ օգտագործվում է միայն 2-րդ հարկը: Պայմանավորված նոր կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծմամբ, ինչպես նաև հաստիքների թվաքանակի ավելացմամբ՝ անհրաժեշտություն է առաջացել հիմանորոգել հատկացված 3-րդ հարկը և այն ապահովել համապատասխան աշխատանքային պայմաններով:

Հարկ է նշել, որ շուրջ 30 ոլորտներում ՇՎՏՄ-ն իրականացնում է ստուգումներ և տեղում իրազեկման աշխատանքներ, սակայն այդ աշխատանքների իրականացման համար հատկացված է ընդամենը 2 տրանսպորտային միջոց, որոնք նախատեսված չեն համապատասխան սաքավորումները տեղափոխելու համար, ինչը հաճախ խոչընդոտում է արագ արձագանքմանը և գործառույթների լիարժեք և արդյունավետ իրականացմանը:

2022 թվականին նախատեսվում է

- ՇՎՏՄ-ին հատկացված 3-րդ հարկի հիմնանորոգում՝ ապահովվելով համապատասխան գույքով,

- ստուգումներով պայմանավորված լաբորատոր սաքավորումների տեղափոխման պահանջները բավարարող թվով 5 տրանսպորտային միջոցների ձեռք բերում,
- ոչ պարենային արտադրանքի անվտանգության ցուցանիշների նկատմամբ հսկողություն իրակայացնելու նպատակով լաբորատոր սարքավորումների և չափման միջոցների ձեռք բերում,
- լաբորատոր սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռք բերում,
- աշխատողներների աշխատանքային ունակությունների ու հմտությունների կատարելագործում:

Հավելված 1

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՇՎՏՄ-Ի 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը/գնահատման չափանիշը	Կատարողը	Համակատարը	Ժամկետը
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Ոչ պարենային արտադրանքների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների, չափագիտական կանոնների և նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում	թվով 130 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն		I եռամսյակ
		թվով 190 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			II եռամսյակ
		թվով 152 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			III եռամսյակ
		թվով 120 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			IV եռամսյակ
2.	Համապատասխանության գնահատման ոլորտում իրազեկման մակարդակի բարձրացում և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառում	Համապատասխանության գնահատման ընթացակարգ անցած ոչ պարենային արտադրանք իրացնողների աճ,	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն,	Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	Տարվա ընթացքում
3.	Չափագիտության ոլորտում չափագիտական պետական լիազոր մարմնի հետ համագործակցության մակարդակի բարձրացում և վերահսկողական գործիքակազմի կիրառում	Ստուգաչափված չափման միջոցների շահագործման աճ,	Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն,	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն	Տարվա ընթացքում
4.	Մակնշման ոլորտում սպառողների իրազեկման մակարդակի բարձրացում և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառում	Առանց մակնշման կամ թերի մակնշմամբ ոչ պարենային արտադրանքի իրացման նվազում,	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն	Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն -	Տարվա ընթացքում

5.	Օրենսդրական դաշտի կարգավորման մասով՝ «Շուկայի վերահսկողության մասին» ՀՀ օրենքի ընդունում	ՇՎՏՄ-ին կվերապահվեն նաև հետևյալ իրավասությունները՝ - տեխնիկական կանոնակարգին չհամապատասխանող արտադրանքի իրացման կասեցում, հետ կանչում և ոչնչացում, - հսկիչ գնման իրականացում, - դիտարկումների իրականացում:	Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Տարվա ընթացքում
6.	ՇՎՏՄ-ի վերահսկողական ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և ռիսկերի կառավարում,	Առավել ռիսկային տնտեսվարող սուբյեկտները բացահայտելու նպատակով հավաքագրումված տվյալների վերլուծություն	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	Տարվա ընթացքում
7.	Անձնակազմի կարողությունների զարգացում՝ համագործակցելով ԵԱՏՄ, ԵՄ և այլ միջազգային կառույցների, ինչպես նաև այլ մասնագիտացված շահագրգիռ մարմինների հետ	Կազմակերպել առնվազն մեկ դասընթաց՝ աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով	Կառուցվածքային ստորաբաժանումներ	-	Տարվա ընթացքում

Հավելված 2

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՇՎՏՄ-Ի 2022 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Գործողություն	Արդյունք	Ժամկետ
1.	Հանրային իրազեկման գործիքակազմի ստեղծում և աշխատանքների համակարգում	Իրազեկման և հաղորդակցման ռազմավարության պատշաճ իրականացում	Տարվա ընթացքում
2.	ՇՎՏՄ-ի և վերջինիս գործունեության ճանաչելիության բարձրացում հանրության շրջանում	Հանրության հնարավորինս լայն շրջանակի իրազեկում և տեղեկացվածության մակարդակի բարձրացում	Տարվա ընթացքում
3.	Անհատական իրազեկում-հանդիպումներ առավել խոշոր ներկրող կամ արտադրող ընկերությունների ներկայացուցիչների հետ	Տնտեսվարողների և քաղաքացիների՝ իրենց իրավունքների, պարտականությունների իրազեկվածության մակարդակի բարձրացում	Մինչև չորրորդ եռամսյակ՝ 100 հանդիպում
4.	ՋԼՄ-երի ներկայացուցիչներին ոլորտը կարգավորող իրավական ակտերի, կատարված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանցում՝ մամուլի հաղորդագրությունների տեսքով, անհրաժեշտության դեպքում՝ հարցազրույցների, հարցուպատասխանների, քննարկումների կազմակերպում:	ՇՎՏՄ-ի գործունեության վերաբերյալ հանրության տեղեկացվածության և իրավագիտակցության բարձրացում	Տարվա ընթացքում
5.	ՇՎՏՄ-ի ղեկավար անձանց հարցազրույցների կազմակերպում	Հասարակության շրջանում ՇՎՏՄ-ի գործունեության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	Տարվա ընթացքում
6.	Կպչուն տարբերանշանների մշակում	Տնտեսվարողների գործունեության օրինականության գնահատում	Տարվա ընթացքում
7.	Իրազեկման թերթիկների պատրաստում և տարածում	Սպառողների իրազեկվացության մակարդակի բարձրացում	Տարվա ընթացքում
8.	Տնտեսավարող սուբյեկտի գործունեությանն առնչվող նոր իրավական ակտեր ընդունվելու կամ դրանցում փոփոխություններ, լրացումներ կատարվելու մասին տնտեսվարողներին առցանց իրազեկում	Տնտեսվարողների՝ իրենց իրավունքների, պարտականությունների իրազեկվածության մակարդակի բարձրացում	Տարվա ընթացքում
9.	Պարբերաբար իրազեկում-հանդիպումների կազմակերպում հասարակական կազմակերպությունների, ոլորտում գործող հաշվապահական ասոցիացիաների և շահառու խմբերի հետ	Համագործակցության հաստատման միջոցով ՇՎՏՄ-ի գործունեության թափանցիկության ապահովում	Յուրաքանչյուր եռամսյակ 1 հանդիպում
10.	ՇՎՏՄ-ի գործունեությանն առնչվող մեդիա նյութերի հավաքագրում և վերլուծություն	ՇՎՏՄ-ի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի և ՋԼՄ-ների արձագանքների մոնիթորինգ և գործունեության արդյունքների բարելավում	Տարվա ընթացքում
11.	ՇՎՏՄ-ի թեժ գծով ստացված զանգերի և բողոքների վիճակագրության վարում, ամփոփում, խորհրդատվական նյութերի պատրաստում	Իրավիճակի համեմատական վերլուծության արդյունքում առկա խնդիրների նույնականացում	Յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը

12.	ՇՎՏՄ-ին հասցեագրված դիմում-բողոքների վիճակագրության վարում, ամփոփում	Իրավիճակի համեմատական վերլուծության արդյունքում առկա խնդիրների նույնականացում	Յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը
13.	ՇՎՏՄ-ի պաշտոնական կայքէջի և սոցիալական մեդիայի էջերի բովանդակային, տեղեկատվական սպասարկում և կատարելագործում	Թափանցիկության և իրազեկվածության բարձրացում, հանրության հնարավորիս լայն շրջանակի տեղեկացվածության ապահովում	Տարվա ընթացքում

ՇՎՏՄ-Ի 2022 թվականի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների կատարող է (կազմակերպող է) հանդիսանում իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժինը: